

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

---

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՄԲՈՆ

*Ինտերնետ տեխնոլոգիաները քաղաքական գործընթացներում*

ՂԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

« *Ինտերնետ տեխնոլոգիաները քաղաքական գործընթացներում*» դասընթացի ծրագիրը նշակվել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսումնա-մեթոդական խորհրդի և քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան:

**Ծրագրի հեղինակ— ք.գ.թ., դոցենտ Ջ.Ն.Շափաղաթյան**

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ինտերնետ տեխնոլոգիաները քաղաքական գործընթացներում» դասընթացի ծրագիրը մշակվել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ուսումնա-մեթոդական խորհրդի և քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ ամբիոնի կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան:

Ներկայացվող դասընթացը նվիրված է ինտերնետ տեխնոլոգիաների հայեցակարգային վերլուծությանը և առանցքային հասկացությունների ու հիմնական հարցերի քննարկումներին:

Առաջին բլոգները ստեղծվել են 1990-ական թթ.-ին: Սկզբնական շրջանում բլոգները զանգվածայնություն չէին վայելում և քաղաքականության վրա ոչ մի ազդեցություն չունեին: Համեմետաբար դանդաղ զարգացումից հետո բլոգինգը սկսեց մեծ զանգվածայնություն վայելել: Հայաստանում այն սկսեց մեծ թափ հավաքել 2000-ականների սկզբից:

Դասընթացը նախատեսում է «Քաղաքական տեխնոլոգիաներ» կրթական ծրագրով ուսուցում միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների համար:

## **Դասընթացի նպատակը**

Դասընթացը բացահայտում է ինտերնետ տեխնոլոգիաների էությունը, բնույթը և բազմազանությունը քաղաքականության դրսևորման բոլոր մակարդակներում: Դասընթացում քննարկվում է «քաղաքական բլոգներ» հասկացությունը, սահմանվում են web 2.0 գործիքները, վեր են հանվում քաղաքականության մեջ web 2.0 գործիքների և բլոգների ներմուծման և ազդեցության մեծացման հիմնախնդիրները:

Դասընթացի նպատակը ինտերնետ տեխնոլոգիաների էվոլյուցիոն և ժամանակակից վիճակի լուսաբանումն է, ուսանողներին դրա վերլուծական միջոցներին, ինչպես նաև համաշխարհային ինովացիոն տեխնոլոգիաների դաշտում այդ գիտակարգի զարգացման հիմնական ուղղություններին ծանոթացնելը:

## **Դասընթացի խնդիրները**

- Ինտերնետ տեխնոլոգիաները ներկայացնել իբրև ժամանակակից քաղաքական գործընթացների անքակտելի բաղկացուցիչ:
- Քննարկել քաղաքական բլոգների նկատմամբ հետաքրքրության աճի միտումները, ինչպես նաև դրանք քաղաքական նպատակներով օգտագործելու բազմազան ալիքները:
- Ժամանակակից աշխարհում քաղաքական գործընթացների զարգացման առանձնահատկությունների և ուղիների, սոցիալ-հասարակական համակարգի գիտակարգերի հետ լուսաբանել ինտերնետ տեխնոլոգիաների և քաղաքական գիտության փոխադարձ կապը:

## **Դասընթացի տեղը կրթության համակարգում**

«Ինտերնետ տեխնոլոգիաները քաղաքական գործընթացներում» դասընթացը հանդիսանում է քաղաքագիտական կարևոր տեղեկատվական կուրս ապագա մասնագետ-քաղաքագետների համար: Դասընթացը հատկապես կարևորվում է այն տեսանկյունից, որ ներկայումս խիստ արդիական շեշտադրումներ են կատարվում ժողովրդավարական գործընթացների վրա, ասենք ընտրությունների, որոնց պարագայում այսօր արդեն ինտերնետ տեխնոլոգիաներն ունեն անուրանալի և առաջնային նշանակություն: Գրեթե բոլոր կուսակցությունները այժմ առավել մեծ տեղ են հատկացնում web 2.0 գործիքներին՝ դրանով իսկ անմիջական կապ պահպանելով իրենց ընտրողների հետ:

## **Դասընթացի կրթական արդյունքները**

- 1) Համացանցում համապատասխան տեղեկատվության համապատասխան կայքում կամ բլոգում արդյունավետ որոնումների ընդունակության ձևավորում:
- 2) Տեղեկատվական գիտելիքը վերափոխելու կարողություն, այսինքն տեղեկատվության հետ աշխատելու և վերլուծելու ունակությունների զարգացում:
- 3) Վերլուծական խնդիրների, հետազոտական հարցադրումների և հիմնական վարկածների ձևավորման կարողության զարգացում:
- 4) Էմպիրիկ տվյալների հավաքում՝ օգտվելով տարբեր բլոգներից, կայքերից (ինքնուրույն աշխատանք կատարելու համար):

### **Կրթական մեթոդները (պարապմունքների անցկացման ձևերը)**

- ա) Դասախոսություններ, այդ թվում երկխոսության բաղադրամասերի ընդգրկմամբ:
- բ) Սեմինար պարապմունքներ՝ փոխներգործող (ինտերակտիվ) բանավեճերի առաջադրմամբ:
- գ) Ինքնուրույն աշխատանք՝ ընդգրկելով վերլուծական նյութերը:
- դ) Արտալսարանային հաղորդակցություն դասախոսի հետ՝ քննարկումների համատեղ պատրաստում:

### **Դասընթացի բովանդակության յուրացման խնդիրները**

*Դասընթացի ավարտին ուսանողը կունենա՝*

#### **Գիտելիք և իմացություն**

- Կծանոթանա ինտերնետ տեխնոլոգիաների տեսական մոդելավորման հիմնական մեթոդների, էվոլյուցիայի և զարգացման նոր միտումների հետ:
- Կստանա համապատասխան գիտելիքներ web 2.0 գործիքների սահմանումների, քաղաքականության վրա դրանց ազդեցության մեծացման հիմնահարցերի մասին:

#### **Գիտելիքի ստուգման ընթացիկ ձևերը**

1. Ինքնուրույն աշխատանքի արդյունքները վերլուծական աշխատանքների տեսքով (միջանկյալ վերահսկում), լրացուցիչ աղբյուրների և գրականության օգտագործում:
2. Հայեցակարգերի, փաստարկումների քննարկումներ:
3. Դասընթացի թեմաների թեստավորում. սահմանային կամ ընդհանուր արդյունքային թեստավորումներ:
4. Ընթացիկ (միջանկյալ) գրավոր և բանավոր քննություններ:
5. Եզրափակիչ քննություն (վերջնական արդյունքի վերահսկում):

## Դասընթացի բովանդակությունը

**Թեմա 1.** web 2.0 գործիքների և բլոգների հիմնական հասկացությունների սահմանումը

web 2.0 գործիքները և բլոգները ստեղծվել են 1990-ական թթ.-ի վերջերին, սկզբնական շրջանում բլոգները զանգվածայնություն չէին վայելում և քաղաքականության վրա ոչ մի ազդեցություն չունեին: Բլոգների ակտիվությունը և հատկապես քաղաքական ազդեցության աճը մեծապես կապված էր ինտերնետի զարգացման հետ: Քննարկվում են բլոգների բազմազան տեսակները. անձնական, կորպորատիվ, կոլեկտիվ, ուրվականային և այլն:

**Թեմա 2.** web 2.0 բլոգների կիրառումը հայաստանյան ՁԼՄ-երի կողմից

Հայաստանի հանրապետությունում բլոգների և վեբ գործիքները կիրառվում են նաև հայաստանյան ՁԼՄ-երի կողմից: Վերլուծության են ենթարկվում ՁԼՄ-երի կողմից վարվող բլոգների գրառումների ուսումնասիրություններ :

**Թեմա 3.** web 2.0 գործիքների կիրառումը ՀՀ-ում գործող քաղաքական կուսակցությունների կողմից

Այս թեմայի շրջանակներում ուսումնասիրվում և վեր են լուծվում Հայաստանում բլոգների ներթափանցումը և զարգացումը, քաղաքականության մեջ դրանց կիրառումը, մասնավորապես քաղաքական կուսակցությունների կողմից: Հիմնական վարկածը, որն առաջ է քաշվում այս շրջանակներում, հետևյալն է՝ Ինչ առաջադրանքներ են իրենց առջև դնում քաղաքական կուսակցությունները վեբ 2.0 գործիքները կիրառելիս:

**Թեմա 4.** Բլոգների առանձնահատկությունները ժողովրդավարական վարչակարգերում

Քանի որ ժողովրդավարական երկրներում ինտերնետ տեխնոլոգիաների կիրառելիության և քաղաքական գործընթացների վրա ազդեցությունը չափազանց տարբերվում են իրարից, ուստի այս բաժնում բլոգների առանձնահատկությունները տարբերակում ենք ինչպես ընդհանուր չափանիշներով, այնպես էլ մասնակի դրսևորումներից ելնելով:

**Թեմա 5.** Քաղաքականության մեջ web 2.0 գործիքների ու բլոգների ներմուծման ուղիները

Այժմյան իրավիճակն այնպիսին է, որ առանց վեբ գործիքների քաղաքականությունը գրեթե անհնարին է դառնում: ՁԼՄ-երն այլևս ի վիճակի չեն արագ արձագանքելու տեղի ունեցող իրադարձություններին: Արդեն իսկ շարքային քաղաքացուն չի բավարարում սովորական տեղեկատվությունը, այստեղ է, որ վեբ գործիքների օպերատիվությունը և արագ արձագանքելու ունակությունը դառնում է առաջնահերթություն:

**Թեմա 6.** Բլոգների՝ քաղաքականության վրա ազդեցության մեխանիզմները և առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանում այսօր գործում են մի քանի տասնյակ լուրեր ներկայացնող հեռուստահաղորդումներ, թերթեր և ինտերնետային պարբերականներ: Ի հավելումն նշեն, որ այսօր Հայաստանում գործում են մի քանի հարյուրավոր բլոգներ: Այսինքն, վերջին հաշվարկներով բլոգներից ինֆորմացիա ստացողների թիվը կարող է մրցակցել այլ

աղբյուրներից ինֆորմացիա ստացողների հետ:Ըստ այդմ, վեր են հանվում մի շարք առանձնահատկություններ, որոնք բնութագրական են Հայաստանի քաղաքական դաշտին վեբ գործիքների ազդեցության տեսանկյունից:

**Թեմա 7.** Բլոգների առանձնահատկությունները ոչ ժողովրդավարական վարչակարգերում

Ի տարբերություն ժողովրդավարականի, այստեղ առաջ են քաշվում այն գործոնները,, որոնց միջոցով քաղաքական իշխանությունները արգելապատնեշներ են դնում ժողովրդի և ինֆորմացիայի միջ, այսինքն մատուցում են այն ինֆորմացիան, որը ցանկանում են իշխանությունները, հակառակ դեպքու Error հրամանով դուրս են նետվում բոլոր տեսակի փնտրտուքները ինտերնետում:

**Թեմա 8.** Քաղաքականության մեջ web 2.0 գործիքների ու բլոգների ազդեցության մեխանիզմները

Այսօր արդեն պատկերացնել քաղաքականություն առանց վեբ գործիքների կիրառման, պարզապես արդյունավետ չի լինի: Այդուամենայնիվ, քննարկվու և վեր են լուծվում տարաբնույթ մեխանիզմներ, որոնք էական ազդեցություն են ունենում քաղաքականության վրա::

### **Սեմինար պարապմունքի հարցեր**

1. Ինչ են իրենցից ներկայացնում ինտերնետ տեխնոլոգիաները
2. Ինչ են web 2.0 գործիքները
3. Ինչպես են ներմուծվում web 2.0 գործիքները և ինչպիսին են նրանց ազդեցության մեխանիզմները քաղաքականության մեջ
4. Ինչպես են կիրառվում վեբ գործիքները Հայաստանի Հանրապետությունում գործող քաղաքական կուսակցությունների կողմից
5. Ինչպես են կիրառվում բլոգները հայաստանյան ՁԼՄ-երի կողմից
6. Ինչ առանձնահատկություններ և հեռանկարներ կան Հայաստանում վեբ գործիքների զարգացման առումով

1. Andrew Chadwick, Internet politics states, citizens and new communication technologies, Oxford University Press, UK 2006
2. Alison Alexander, Jarice Hanson, Taking Sides, Clashing Views in Mass Media and Society, McGraw-Hd/Dushkm, 9edition, USA
3. Barbara Obrien, Blogging America: political discourse in a digital nation, Franklin, Beedle Assosiates, USA, 2004
4. Jonathan Law, A dictionary of Business and Management, Fifth edition, Stock, UK, March, 2009,
5. Smith Kristian Nicole, Social Media and Political Campaign, University of Tennessee Honors Thesis Projects, 2011
6. Tanni Haas, Making it in the political blogosphere the worlds top political bloggers share the secrets to success, The Lutter worth Press, 2011, Cambridge, UK,



